

5833

107

3kn 1/45.924)

F-62

ЗКП (47-924)

R-62 Fhph4t52dht

Բ. ԲԻԲԻՆԵՑԶԵՎԼԵ

Ա Ե Զ Ա-
Կ Ո Ւ Յ Մ Ա Յ Ի
Տ Ր Ա Գ Ե Դ Ի Ա Ն



卷之三

Ι Η Τ Σ Ζ Ρ Ο Σ

卷之三

1 • 9 • 3 • 2

ՀԿՊ1(47.924)

F-662

Տ. ԲԻԲԻՆԵՑՉԱԼԻ

25 AUG 2005

14 NOV 2009

ԱԽՉԱԿՈՒՑՄԱՅԻ ՏՐԱԳԵԴԻԱՆ

(ԲԱԴՎԻ ԿՈՄՈՒՆԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ)

1955
ՀՀՀՀ

124



ԳԵՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

1932



գայթները հաղթահարելով ու վոչնչացնելով տանում և դեպի բանվոր դասակարգի հաղթանակը, նրա դասակարգային խղեաների իրադործումը:

Բարձր պահելով պրոլետարական հեղափոխության և խորենացիոնալ համերաշխության դրոշը, 26 կոմունարները մեզ թողին իրենց արյունով դրոշմված մեծ պատգամ—աչքի լույսի պես պաշտպանել Մեծ Հոկտեմբերի նվաճումները:

Ուստի և Բագվի կոմունայի պատմությունը լավագույն դպրոցն ե յերիտասարդ սերունդը լենինիզմի վոգով դաստիարակելու համար:

Նպատակ չունենալով բաղմակողմանի ուսումնասիրել և դիտականութեն լուսաբանել Բագվի կոմունայի պատմությունը—մենք խնդիր ենք գրել մեր առաջ, այս գրքում տալ Բագվի կոմունայի յերկու ամենանշանակոր առաջնորդների՝ Ալյոշ Զափարիձեյի և Ստեփան Շահումյանի կենսադրությունները բնութագրող և բաղմաթիվ թշնամիներով պաշտպան Բագվի կոմունայի լարված պայքարը և իմպերիալիստական ուժերի ու նրանց վարձկան ժանր-բոլորժուական և բուրժուական-ազգայնական կուսակցությունների դեմ մղած անհավասար պայքարի մեջ նրա անկումը բնութագրող նախնական մատերիալները:

Բայց և կուսակցության յերկու հնագույն մարտիկների—Ալյոշա Զափարիձեյի և Ստեփան Շահումյանի կենսադրական տվյալները շարադրելու ժամանակ հեղինակն ողովել և ընկերների բաղմաթիվ հեշտություններից, նրանց հետ իր անձնական հանդիպումների մոմենտներից, նույնպես և ցարական ախրանկայի արխէվներում մնացած այն պաշտոնական գոկումենտներից, վորոնց մեջ բաղմիցս անդամ հանդեռ գալիս յերկու ընկերները, վորակն կովկասի պրոլետարիատի յերկաթե շարքերի փորձլած զեկավարներ:

Բ. ԲԻԲԻՆԵՅՎԻԼԻ

ԱԼՅՈՇԱ ԶԱՓԱՐԻՁԵՅ

Ալյոշա (Պրոկոֆիյ) Զափարիձեն ծնվել է 1878 թ. Քութայիսի նահանգի Ռաշչայի գավառի Շարգոմեթի գյուղում՝ աղնվականի ընտանիքում: Մանուկ հասակում զրկվելով հորից, նա մնում է մոր խնամքի տակ: Այրին զրեթե չունենալով ապրուստի միջոց, ստիպված է լինում ելութական ոգնության համար դիմել իր յեղբայրներին, վորոնք ապրում ելին հարևան գյուղում: Բայց նրանք չկարողացան վոչ մի ոգնություն դույց տալ նրան, վորովհետև իրենք ել գտնվում ելին նեղ վիճակում: Այս հանգամանքների հետեւանքով փոքրիկ Ալյոշան, պրոլետարական զործի և բոլոր զրկվածների կյանքի բարելավման ապագա մարտիկը, մատող հասակից ճանաչեց կարիքն ու զրկանքը:

Դեռևս մանուկ հասակում Ալյոշան իր աչքի ընկնող ընդունակություններով իր վրա բեկուց ըրջապատղների ուշագրությունը: Նրա մոտ աղջականներից մեկը, ժողովրդական ուսուցիչ՝ Սիմոն Զափարիձեն 1889 թվին փոքրիկ Ալյոշային տեղավորեց Սացիսնիսի աղնվական դպրությում, վորտեղ ուսուցումը ձրի յեր և աշակերտների ապրուստը հոգացածում եր պետական զանձարանի հաշվին:

Դաստիարակվելով չքավորության և կարիքի մեջ, Ալյոշան, բնականարար չափազանց վաղ դդաց, վոր ինքը վոչ մի ընդհանուր բան չունի աղնվականների հասարակության ձրիակեր խավերի հետ: Իր դպրոցական ընկերների մեջ նա միշտ աչքի յեր ընկնում առանձնահատուկ գծերով, նա վոչ վոքի թույլ չեր տալիս վիրավորել ճնշվածներին և անձնագոհներն պաշտպանում եր նրանց:

1894 թ. Ալյոշան ավարտում է Սացիսնիսի տարրական դպրոցը և նույն աղջականների աջակցությամբ ընդունվում է Թիֆլիսի ուսուցչական ինստիտուտին կից քաղաքային դպրոցը: Յերկու տարի հետո, 1896 թ. նա անցնում է ինստիտուտը:

Այդ ժամանակ Ալյոշան իր ընկերների հետ միասին սկսում է հաճախել բոլոր հին հեղափոխականներին ծանօթ թիֆլիսի Կայդանովյան քրադարանը, կիրոչնայա փողոցում (այժմ Ժորեսի փող.): Հենց այս տեղ յես ծանօթացա նրա և նրա հետեւյալ ընկերներին՝ Սերգեյինի, Գումարտյանի, Պալել Պուշկարենի, Վաղիմիր Մեշչերինի, Պավել Կալանդանեյի և ուրիշների հետ, վորոնք նույն ուսուցչական ինստիտուտի

աշակերտներ ելին և աշխատում ելին ուսանող յերիտասարդության շրջանում: Յես մտերմացա Ալյոշայի հետ, ստանում ելի նրանից քաղաքական-տնտեսական բնույթ կրող գրքեր, իսկ հետագայում նրան հետ միասին հաճախում ելի անլեզալ ժողովներին, ողնելով նրան քաղաքական և պրակտիկ բնույթ կրող մանր առաջադրությունների կատարման մեջ:


Շուտով հիշյալ գրադարանի շուրջը հավաքվեց անլեզալ մի խմբակ: Խմբակի անդամներն ելին, բացի Ալյոշայից, Սերգեյեվը, Կալյուժնին (հետագայում հայտնի եսեր), Դոմոստրոյեվ, Ալեքսանդր Ռոձեվիչ (քաղաքական աքսորական), Սակալովսկի և ուրիշները: Այս խմբակը բաժանվում եր յերկու մասի, յմեկը մարքսիստական՝ ընկ. Ալյոշայի («անզուսպ»-ի, ինչպես կոչում ելին նրան այն ժամանակ) գլխավորությամբ, իսկ մյուսները նարոդնիկների՝ Կալյուժնու գլխավորությամբ: Խմբակը շուտով սկսեց տարածել անլեզալ գրականություն, իսկ այնուհետև ընկ. Ալյոշայի անմիջական մասնակցությամբ բաց թողնվեց մի թոռոցիկ, տպիված հեկտոդրաֆով (այս գործում անմիջական մասնակցություն ունելի և յես) ընդդեմ «Ճշմարիտ ոռւս մարդկանց» հայտնի պարագլուխ ավագ երեց Վոստրօվսկի: Սա ընկ. Ալյոշայի քաղաքական առաջին յետոյթն եր:

Վերոհիշյալ խմբակի միջոցով ոռւս աքսորական բանվորների հետ հաստատված կապերի չնորհիվ ընկ. Ալյոշան շուտով մտերմացավ Թիֆրիսի բանվորներին և կարճ ժամանակից մտավ սոցիալ-դեմոկրատական կազմակերպության մեջ (1898 թ.):

1900 թվի ոգոստոսին Անդրյերկաթուղիների գլխավոր արհեստանոցներում բոնկվեց մի գործադուլ, վոր կաղմակերպել ելին առաջավոր բանվորները ՌՍԴԲԿ Թիֆլիսի կաղմակերպության ղեկավարությամբ:

Յերկաթուղու գլխավոր արհեստանոցներում, ինչպես և Թիֆլիսի մյուս ձեռնարկություններում աշխատանքի գժոխային պայմաններ ելին տիրում: Բանվորն որական ստանում եր 60 կոպեկ, ամենաշատը մեկ ոուրլի, հաճախ ծեծի յենթարկվելով վարպետների կողմից: Ամենաչնչին արարքի համար աղմինիստրացիան տուգանում եր բանվորներին, հաճախ հեռացնում եր գործից: Յերբ չափն անցավ, բանվորներն այլևս չկարողացան համբերել և հայտարարեցին գործադուլ: Աղմինիստրացիան պատասխանեց ճնշումներով, ձերբակալելով գործադուլի ղեկավարներին: Գործադուլավոր բանվորները հետեյալ պահանջները ներկայացրին.

1. Անպայման վերացնել ծեծը,
2. 60 կոպ. աշխատավարձն ավելացնել 50 տոկոսով, իսկ մեկ ոուրլուց բարձր՝ 30 տոկոսով,
3. Վերացնել տուգանքը,



ԱԼՅՈՇԱ (ՊՐՈԿՈՓԻԵ) ԶԱՓԱՐԻ ԶԵ
1878 - 1918

4. Բարելավիել առողջապահական պայմանները,
 5. Լավացնել դեպի բանվորներն ունեցած վերաբերմունքը,
 6. Վերացնել արտաժամյա աշխատանքը,
 7. Ազատել բանտարկված ընկերներին,
- Դորձադում զեկավարներից մեկն եր ընկ. Ալ. Զափարիձեն:

1900թվին թիֆլիսում նախապատրաստվում եր մայիսներան ցույցը (յելլորդը): Ալյոչան ակտիվ մասնակցություն և ունենում ցույցի նախապատրաստմանը և իր բնակաբանում պահում և տպված թուուցիները: Ցույցից առաջ, վոր բանվորները կազմակերպել ելին քաղաքից գույրս (Աղի լճերի շրջանում), Ալյոչայի բնակաբանը խուզարկում են: Իսկ հիշյալ գործադուլից հետո նրան ուղղակի հանում են դպրոցական նախարանից (այն ժամնակ նա ուսուցչական ինստիտուտի Յ-րդ դասարանում եր) և բանտարկում են Մետեխի բերդում: Մոտ մի տարի այնտեղ մնալուց հետո Զափարիձեն աքսորվում է Հայրենիք, Ռաչալի գավառը:

1901թ. նա արդեն Քութայիսում և և ակտիվ մասնակցություն ցույց տալիս բանվոր դասակարգի թե քաղաքական և թե անհասական պայքարին: Ի իմ մի այլոց նա Քութայիսում զեկավարում է Փիրալովի ծխախոտադործ բանվորների գործադուլը:

1903թ. ընկ. Ալյոչան արդեն անդամ և մեր կուսակցության իմերեթ-Մինդրելիայի կոմիտեյի, վորի մեջ բացի նրանից մտնում ելին ընկ. ընկ. Ն. Խոմերիկի, Պ. Զիշինաձե, Ս. Կիլաձե, Գ. Քալբարաձե և յևս:

1904թ. հուլիսի սկզբներին Քութայիսում կատարվեց չափազանց կարեռ մի ակտ: Զերբարկաված ընկերներին աղատելու համար հարձակում գործվեց նրանց ուղեկցող պահակախմբի վրա: Լուր սահատով, վոր Ճիւթառայից բերում են մեր ձերբակարգված ընկերներին—Ն. Խոմերիկին, Գավ. Միքելաձեյին, Նեստ. Զիտիկաձեյին և յերկու ուրիշ ընկերի, կուսակցական կոմիտեն վորոշում և աղատել նրանց: Այս գործի կաղմակերպումն իր վրա վերցրեց ընկ. Զալյարիձեն: Զիտիկիշի գյուղից կանչեցին միքանի նվիրված գյուղացի կուսակցական ընկերները: Պատրաստվող ակտի բոլոր անմիջական և կողմնակի մասնակիցները հավաքվեցին Քութայիսի կայարանում, սպասելով ձերբակարգածներին բերող գնացքին: Պահակախմբի վրա հարձակումը տեղի ունեցավ թիֆլիսյան փողոցում: մեր ընկերներ հանկարծակի կրակ բաց արին, ձերբակարգածներն ուղարկեցին աղմուկից և իրարանցումից ու փախան: Այդպիսով աղատվեցին Ն. Խոմերիկին և Գ. Միքելաձեն (մյուսները չկարողացան փախչել): Հրացանաձգության ժամանակ սպասվեց մեր լավադույն դյուռացի հերոսներից մեկը, ընկ. Պր. Լեժավան:

Այս դեպքից հետո, վորը վոտքի հանեց ամբողջ վոստիկանությունը և ժանդարմերիան, ընկ. Ալյոչայի համար այլևս անհնար եր մնալ Քութայիսում և նա տեղափոխվեց Թիֆլիս:

Ծնկ. Զափարիձեն յերկար չմնաց Թիֆլիսում: կուսակցական կազմակերպության վորոշան համաձայն 1904թիվ սկզբին նա մեկնում է Բագու: Այստեղ նա ծավալեց կուսակցական լայն աշխատանք և շուտով մեծ ժողովրդականություն ձեռք բերեց Բագվի ոլորտեարխատի ըրջանում, ստանալով Ալյոչա մականունը (նրա խկական անունն եր Պրկովիի), վորով նա հայտնի յեր կովկասյան պրուետարխատին, իսկ եր վողբերդական մահվանից հետո ԿՍՀՄ բոլոր բանվորներին ու աշխատավորներին:

Բագվում Ալյոչան պաշտոնապես վարում եր նավթարդյունաբերական բանվորների միության քարտուղարի պարտականությունը, վաստորեն հանդիսանալով այդ միության առաջնորդը և կազմակերպիչը: Միաժամանակ նա կուսակցության Բագվի կոմիտեյի անդամ եր և կատաղի պայքար եր մղում մենչեկիների գեմ: Արդ պայքարը, վորը հայությամբ դեկավարում եր ընկ. Ալյոչան, շարունակվում է 1904—1905թվերի ընթացքում:

1908թվին ընկ. Ալյոչային ձերբակալում են և հինգ տարով աքսում թուուցի:

Հետաքրքրական է ծանոթանալ թե ինչպես և ժանդարմական վաստաթուղթը բնութաղրում ընկ. Ալյոչայի այդ ժամանակից հեղափոխական աշխատանքը: Բերում ենք ամբողջությամբ ընկ. Զափարիձեյի աքսորին վերբակրող վորոշումը և տեղեկությունները:

Տ ե ղ ե կ ո ւ ր յ ո ւ ն ն ե ր

Վարչական ախորի լենքակա Պուկոնի Ապրասիոնի Զափարիձեյի մասին

Սպասարկունուն, անուն, հայրանուն, կոչում, ծննդական միամբ կոմմ արձանաբուժության վայր և մեղադրյալը ընտանեկան ըրությունը:

ԶԱՓԱՐԻ ՁԵ ՊՐՈԿՐԵ Ապրասիոնի անդամական բաժինի նահանգի Բաժարայի գավառու Շարդումնեթի գյուղը, ամուսնացած

27 տարեկան:

Տեղեկություններ հանցավորության մասին և մեղադրյալի աված բացատրությունները:

Մեղադրում և գտատապարտութիւն արարակ համար, վոր ցույց են տրած արան կոց Բագվի Նահանգային ժանդարմական վարչության 1908թվի գեկտերերի 30-ւ և 6916 վորոշան պատճ նում, իրեն մեղադրության պատճեմ:

Վերտեղ և յերբանից դանվում և կտանքի
տակ պահանորդական որենսդրության
կարգով:

Ենթարկված և նախնական քննության կամ
փորձալ հարցաքննության, մեղադրու-
թյան ելությունը, հանցագործությունը
կանխելու միջոցը, և ինչ ուղղություն
ե տրվելու դատական դորժին:

Տեղական իշխանությունների յեղակացու-
թյունը վարչական առուժը յենթադրյալ
չափը մասնաւ:

Ազատ և ապրում և Բալախանի-Մա-
րուչի վոստիկան անդամության
մեջ:

Նախնական քննության կամ փորմալ
հարցաքննության չի յենթարկված:

Արդելել քնակությունը Բագվի Քաղա-
պետության սահմաններում, պահ-
պանության արտակարգ որենքը
ուժի մեջ լինելու ամբողջ ընթաց-
քում:

Առ գիր՝ Բագվի նահանգային ժանդարմական վարչության 1908 թ. դեկտեմ-
բերի 30-ի № 6916 վորոշման պատճեն:

Ստորագր. ի. տ. Բագվի Քաղաքապետի
Քնապետ՝ Շուքին Կիյ
Ճիշտ և. Բագվի Քաղաքապետը Դիվանը
Վարչէ՝ (Ստորագրություն)

ՎՈՐՈՇՈՒՄ № 6916

1908 թի դեկտեմբերի 30-ին, Բագու քաղ.։ Յես, Բագվի նահան-
գային ժանդարմական վարչության պետ Գեներալ մայոր Կոզինեցելիս,
քննելով Պրոկոֆիյ Ապրասիոնով Զափարիձեյի քաղաքական բարեհու-
սության աստիճանը պարզելու նպատակով տեղեկություններ հավաքե-
լու համար կատարված զրադրությունը՝ գտա հետեւյալը՝ Այս տարվա
մայիսի 18-ին Բագու կայարանում բոնվեց Քութայիսի նահանգի ազնվա-
կան Պրոկոֆիյ Ապրասիոնով Զափարիձեն, վորը հանդիսանում է Բա-
գու քաղաքի և նրա շրջաններից նավթարդյունաբերական բանվորների
պրոֆեսիոնալ միության քարտուղարը։ Խուզարկության ժամանակ նրա
մոտ գտնվեցին յերկու տպագրված թուոցիկներ՝ «Լիազոր-բոյկոտիստ-
ների բանաձեւը»—«Բոլոր բանվորներին» և «Կուսակցական ուսակցիո-
ներներ»—ը հրատ. Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորա-
կան կուսակցության Բագվի կազմ., և նրա ժամկետանց հնգամյա ան-
ցագիրը, տրված Քութայիսի նահանգի Ռաշայի գալառային վոստիկա-
նական վարչությունից 1902 թ. սեպտեմբերի 25-ին, № 752. այս փաս-
տաթթի իսկությունը հաստատելը հնարավոր չեղալ, զորովհետեւ Ռա-
շայի գալառայի սթ. հունիսի 3-ի № 71 դրության համաձայն, Ռա-
շայի գալառային վոստիկանական վարչության բոլոր թղթերը և գոր-
ծերը 1905 թ. վոչչացվել են հեղափոխականների կողմից։ Բացի դրանից

Բագվի փոստ-հեռագրական դրասենյակի պետը բոնել և մի ծրար հաս-
ցել այլ վածքության համաձայն, վորի մեջ գտնվել և անլեզակ գրա-
կանություն, հրատ. Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորա-
կան կուսակցության կենտր. Կոմիտեյի։ Հնարավոր չեղալ գրագրու-
թյամբ ստուգել այդ ծրարի և նման բովանդակությամբ ուրիշների
Պրոկոֆիյ Զափարիձեյի կողմից ստանալու վաստը։

Նկատի առնելով, վոր Զափարիձեն արդեն առաջներում պատասխա-
նատվության և յենթարկվել քաղաքական գործերով և աղենտուրայի
տեղեկությունների համաձայն հանդիսանում է սոցիալ-դեմոկրատների
կուսակցության աչքի ընկնող գործիչ, կենթադրեյի արգելել Պրոկոֆիյ
Զափարիձեյի բակությունը Բագվի քաղաքապետության մեջ, ուժե-
ղացրած պահպանության ամբողջ ընթացքում։ Վորոշեցի—սույն գրա-
գրությունը յեղափակել և ներկայացնել այն ի կարգագրություն Բագ-
վի պ. Քաղաքապետին։

Ստորագրեց՝ Գեներալ-մայոր՝ ԿՈԶԻՆՅԵՎ,

Ճիշտ և՝

Բագվի քաղաքապետի դիվանատան վարիչ՝ (Ստորագրություն)

Ստուգեց՝ գործավար՝ (Ստորագրություն)

Ընկ. Զափարիձեն Ռաստով գալուն պես լծվում է տեղական կուսակ-
ցական հեղափոխական աշխատանքի։ Իր հեղափոխական գործունեյու-
թյան հենց առաջին քայլերից ընկ. Զափարիձեն գրավում է բոլոր շրջա-
պատողներին իր անձնական հմայքով, յեռանդով և վճռականությամբ։
Այս հատկությունները Ռուսություն ևս նրան բարձրացրին, առաջ քաշե-
ցին զեկավար աշխատանքների։

1910 թ. ընկ. Զափարիձեյին կրկին ձերբակալում են և այս անդամ
արդեն աքսորում են Վալոգդայի նահանգը, Մեծ Ռուսայություն, յերեք տա-
րով։ Այդ ժամանակվանից սկսած մինչև 1913 թ. յես նամկարություն
ունեյի նրա հետ։ Ի միջի այլոց Մեծ Ռուսայությունից 1912 թ. սեպտեմբերին
յես ստացա Ալյոշայի լուսանկարն ուրիշ աքսորական ընկերների հետ
միասին։

1913 թ. վերջերին ընկ. Ալյոշան Ռումանովների տան յերշաբայու-
րամյակի առթիվ հայտարարված ամնիստիայի չնորհիվ ազատվում է աք-
սորից և վերադառնում թիֆլիս։ Այստեղ նա դարձյալ սկսում է կուսակ-
ցական հեղափոխական ակտիվ աշխատանք, միաժամանակ դասախոսու-
թյուններ կարգավորվ այդ շրջանում բանվորների մեջ ժողովրդականու-
թյուն գայելող ժողովրդական համալսարանում։

1915 թ. մայիսմեկյան ցույցի նախապատրաստմանը մասնակցելու
համար ընկ. Զափարիձեյին նորից ձերբակալում են և աքսորում Վալոգ-
դայի նահանգի կամենկա գյուղը՝ մինչև պատերազմի վերջը։ Մի տարի
գայի նահանգի կամենկա գյուղը՝ մինչև պատերազմի վերջը։ Մի տարի

Հետո ընկ. Ալյոշան փախչում և աքսորից նախ Պետրոպլատ, իսկ հետո դալիս և Թիֆլիս։ Այսուեղ նա ապրում է անլեզալ կերպով, կատարելով քաղաքական ակտիվ աշխատանք։

Հետաքրքրական և այսուղ ևս բերել ժամդարմերիայի վորոշումը ընկ. Զափարիձեյի աքսորի մասին։

«1915թվի մայիսի 20, Թիֆլիս քաղաքում, յես, Թիֆլիսի Ժանդարմատական Վարչության սկզբ Գնդապես Պաստրյուլինս, քննելով ներկա դրագրությունը, կատարված ռազմական դրության մեջ հայտարարված վայրերին վերաբերող կանոնների 23-րդ հոդվածի կարգով, Ալյոշիա քաղաքի բնակիչ Ոհանես Կարապետով Լազովի, 35 տարեկան (հայլուսավորչական գավանության, ամուսնացած, ունի յերեք փոքրահասակ յերեխաներ, ծառայում է Թիֆլիսի քաղաքային Վարչության կից պահեստիների ընտանիքների ինսամատարության հանձնաժողովում) և Քութայիսի նահանգի Ռաշա Գավառի Շարզոմեթի դյուզի աղնվական Պրոկոֆիյ Ապրասինով Զափարիձեյի, 35 տարեկան (ուղղափառ դավանության, ամուսնացած, ունի յերկու փոքրահասակ յերեխաներ, զբաղվում է մասնավոր դասերով) քաղաքական բարեհուսությունը հետազոտելու մասին, գտա։

Նկատի ունենալով ազենտուրայի տեղեկությունները, վոր Հիշյալ անձնափորությունները պատկանում են Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության բայլշենիլյան Փրակցիայի աչքի ընկնող զործիչների և Ղեկավարների թվին և մասնակցել են մայիսմեկյան թուոցիկների տպագրության և տարածման դրծին-Լազովի անցած ապրիլի 30-ին, իսկ Զափարիձեն սույն մայիսի 4-ին խուզարկվեցին, ինքը ակալվեցին և մնթարկվեցին ներկա դրագրության։

Կատարված խուզարկության հետեանքով Լազովի մոտ դանվեցին 17 որինակ ըրուցյուր, գլխավորապես ուստերեն լեզվով, վորոնց տարածում արդեւ ված և հասարակության մեջ, և մի աշտկերտական տետր, վոր տեղ Լազովի սեփական ձեռքով վրացերենի յե թարգմանված խուզարկության ժամանակ նրանից խրված ըրուցյուններից մեկը—«Սոցիալիստական գրույցներ» վերնագրով, աշխատություն և Գելինյերի։

Պրոկոֆիյ Զափարիձեյի մոտ խուզարկության ժամանակ դանվեց հետեւալլը—մի արգելված ըրուցյուր և մի զբագրություն, վորից յերեսում և, վոր նա անդամ է վրացիների մեջ զբագիտություն տարածող Թիֆլիսի ընկերության և ժողովրդական համալսարանների Թիֆլիսի ընկերության։ Այս վերջին ընկերության քարտուղարն է Զափարիձե։

Լազովի և Զափարիձեյի բաց թողած թուոցիկը «ընկեր բանվորներ» վերնագրով, «ՄԴԲ Կուսակցության կովկասյան կազմակերպության» առնունից, միայն անհշան թվով և տարածվել Թիֆլիս քաղաքում։ Թուոցիկը, վորի մի որինակը կցված է սույն զբագրության, համարվում է բան-

վորներին առաջադրել և պայքարել իրագործելու հետեւյալ պահանջները։ Կորչե արյունաբար պատերազմը. կեցցե իսաղաղությունը, կնքված պատերազմող ժողովուրդների իսկական ներկայացուցիչների կողմից ազդացին ինքնուրուցման հիման վրա։ Կեցցե հիմնադիր ժողովը, ընտրված ընդհանուր, հավասար, ուղղի և դադանի ընտրական իրավունքի հիման վրա, կորչի ուստական վոճրագործ ինքնակալությունը, վորը ներկա պատերազմի հանցավորներից մեկն է։ Կեցցե գեմոկրատական հանրապետությունը։

Ինձ վատահված վարչության գործերում հայտարերված տեղեկանքների համաձայն պարզվեց, վոր Պրոկոֆիյ Զափարիձեն հայտնի յե իրեն անդամ Թիֆլիսի սոց. դեմ. կազմակերպության բայլիկլյան Փրակցիայի գեռես 1900թվից, յերբ նա ինձ վատահված վարչության կողմից յենթարկվել ե զբագրության, պետական պահպանության որենսգրության կարգով, Անդրկովկասյան յերկաթուղիների զվարար արհեստանոցների բանվորների մեջ խլոտում առաջացրած պրոպագանդայի համար Կովկասի քաղաքացիական մասի զվարար պետի հողմից արգելված է նրա բնակությունը Անդրկովկասյան յերկրի սահմաններում։

1908թվի մայիսի 18-ին Զափարիձեն բանվեց Բագու կայարանում և խուզարկության ժամանակ նրա մոտ գտնվեցին յերկու տապագրված թուոցիկներ հետեւյալ վերնագրերով՝ 1) «Բոյկոտիստաների լիազորների բանաձեր», և 2) «Բոլոր բանվորներին»։ Նկատի ունենալով վերոզրյալը, նա Բագվի նահանգային ժանդարմական Վարչության կողմից յենթարկվեց զբագրության, վորը կարճվեց առանց վորեւ հետեանքի նրա համար։

Նույն տարում նա մատալ Բագվի սուդ. կազմակերպության մեջ, ուր նա հանդիսանում է ակտիվ գործիչ և զեկավարում է Բագվի սոց. դեմ. բոլոր թերթերի հրատարակությունը, վորոնք հաջորդաբար վակվում են վնասակար ուղղության համար։

1909թվի հունիսին Թիֆլիս կայարանում յերկաթուղային գնացքում գտնվեց մի չեմոդան, վորտեղ հայտնաբերվեց Զափարիձեյի կուսակցական գործունեյությունը մատնանչող մի զբագրություն, նրա անցագիրը, Բագվում նրա ձերբակալվելու և ախրանկայի գրագրությանը յենթարկվելու առթիվ զբագրությունը, վորի հետեանքով վոստիկանության հրապարակային հոկողությամբ արտաքսվեց Կովկասի սահմաններից հինգ տարով, ըստ վորում վորակ բնակավայր, նա ընտրեց Ռուսուով Դիվ քաղաքը։

1910թ. ամառը Ռոստով գալուն պես նա անհապաղ կապ հաստատեց տեղական սոց. դեմ. կազմակերպության հետ և դրավելով այնուեղ աչքի ընկնող տեղ, հանդիսացալ կուսակցական աշխատանքի բոլոր նախաձեռնությունը։

Նությունների ներշնչողը և կազմակերպիչը, կանոնավոր հաճախելով տեղական սոցիալ-դեմոկրատական խմբի ժողովները:

Այսուհետեւ նա անցավ Նախիջևանի սոց.-դեմ. խմբի գլուխը և յեռանդուն կեռողով զբաղվեց նրա կազմի լրացումով։ Նրա վրա դրվեց պրոսպազանդիստական կենտրոնական դպրոցը վարելու պարտականությունը, վորի համար նա գտավ բնակարան և պարապմունքներին մասնակից դարձրեց մի քանի հոգու։

Թողնելով դպրոցի միտքը, գործադիր Կոմիտեն հանձնարարեց Զափարիձելիս կարգակերպել պրոֆեսիոնալ միությունների բյուրո և սոց.-դեմ. բջիջներ բոլոր սլորֆեսիոնալ միություններին կից, 1910 թվի վերջներին բացառապես իր անձնական ջանքերով Զափարիձեն կազմակերպեց սոց.-դեմ. բջիջներ արհեստակցական միություններին կից։

Նրա ղեկավարությամբ կազմակերպությունն ամրապնդվում է և նույն տարվա նոյեմբեր ամսին ընտրվեց «Գործադիր Կոմիտե ՌՍԴԲԿ Դոնի խմբին առընթեր»։

Նույն տարվա ղեկտեմբեր ամսին, նա «Գործադիր Կոմիտեյի» քննությանը ներկայացրեց տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպության կազմակերպչական կանոնադրությունը, վոր կազմել եր ինքը։

1911 թ. հունվարի 30-ին նրա նախաձեռնությամբ կայացավ պատգամավորական ժողով, վորտեղ ընտրվեց Դոնի Կոմիտե, վորի կազմի մեջ նա մտավ վորպես քարտուղար։

Ռոստով Դ/Վ քաղաքապետի կարգադրությամբ մի քանի պրոֆեսիոնալ ընկերությունների վակումից հետո, Զափարիձեն մի բոլոր կազմեց՝ աղմբինստրացիայի կողմից պրոֆեսիոնալ կազմակերպության գործունեյությունը հալածելու հարցի մասին, նպատակ ունենալով, վորքան հնարավոր ե շատ ստորագրություններ հավաքել բանվորներից այդ բոլորի համար և ուղարկել այն Պետական Դումայի նախագահին։ Այդ բոլորի սեազգությունը, դրված Զափարիձեյի ձեռքով, գտնվեց խուզարկության ժամանակ 1911 թվի մարտի 19-ին Դոնի Կոմիտեյի անդամ Կոնստանտին Բոգդանովի բնակարանում։

1911 թվի մարտի 19-ին Զափարիձեն ձերբակարվեց Ռոստով Դ/Վ քաղաքում իր կազմակերպած ՌՍԴԲԿ Դոնի Կոմիտեյի անդամների ժողովում, յենթարկվեց գրագրության և արտաքսվեց Վալոգդայի նահանգը վոստիկանության հրապարակային հոկողության տակ, հինգ տարի ժամանով, այնտեղից նա անհայտացավ և ոտար ազգանուններով յերեաց Կովկասի զանազան վայրերում կուսակցական աշխատանք կատարելու համար։

1914 թվի հունվարին, լեռաղաոնալով վարչական աքսորից, նա ժամանեց Թիֆլիս, վորտեղ անցավ սոց.-դեմ. կազմակերպության բայլ-

շ. իկների Փրակցիայի գլուխը և նույն տարվա հունիսի 27-ին. ս. Դավիթի սարի վրա մասնակցեց բայլշեկների ժողովին, վորտեղ հայտնեց, վոր ինքը մտադիր է Թիֆլիսում ստեղծել բայլշեկների ամուր կազմակերպություն և միացնել այն նախ հայկական սոց.-դեմ. խմբակի հետ։

Մի այլ ազենտուրային աղբյուրի տեղեկությունների համաձայն, Ալեքսեյ Զափարիձեն-Բագվի սոց.-դեմ. կազմակերպության հայտնի լիդեր, «Պակիա» կուսակցական մականունով, 1914 թվի ողոստոսին անեգավ կերպով ապրել է Թիֆլիսում, նա այդ ժամանակ կապ է ունեցել Բագվի սոցիալ-գենովկրատական կազմակերպության հետ և հաճախ այցելելիս է յեղել Մոսկովսկայա փողոցի № 17 տունը։

Նույն տարվա հոկտեմբերի 31-ին Բագվի նահանգային ժանդարմական վարչության պետից ստացվեց մի հեռագիր, վորտեղ հիշատակվում էր, թե նոյեմբերի սկզբներին Պետրոգրադում և Լիֆլանդիայում յենթադրվում եր գումարել Ռուսական կոնֆերենցիա, վորին մասնակցելու համար Թիֆլիսից և Բագվից պատգամավոր եր Ընտրված Պրոկոֆիյ Զափարիձեն։ Այդ պատճառով շարունակվեց Հսկողությունը նրա գործունեյության վրա, բայց նրա Թիֆլիսից մեկնելու փաստը չհաստատվեց։

Ապրիլի 9-ին Զափարիձեն ղեկավարում եր բայլշեկների ժողովը, վորտեղ քննվում եր մայիսի մեկը տոնելու և մի թուուցիկ բաց թողնելու հարցը։ Այդ ժողովում ընտրվում է կազմակերպչական հանձնաժողովի անդամ՝ մայիսեկներան թուուցիկն ամելի մեծ հաջողությամբ բաց թողնելու գործերը կազմակերպելու համար։ Նույն ժողովում Զափարիձեն զեկուցում էր կազմակերպելու համար, Կուցում և թիֆլիսում «Բեկլյան» լեգալ օրգան կազմակերպելու մասին։

Ուսմես կարապետով Լազովը 1911 թվի սկզբին ձերբակարվեց Կիյեվում և յենթարկվեց գրագրության ըստ պետական պահպանության ուժենացրության, ՌՍԴԲԿ Կիյեվի խմբի աչքի ընկնող գործիչների թվին պատկանելու համար, վորտեղ նա խմբագիրն եր «Գուղոկ» ժուրնալի, վորը հանդիսանում եր տեղական սոց.-դեմ. կազմակերպության որդանը։

Հետագայում նրան թույլատրվեց մեկնել արտասահման, վորտեղից նա վերադարձավ Ռուսաստանի սահմանները 1913 թվի մարտի 28-ին, Ռուսական պատկանության մասին սահմանակետի վրայով, ուր նա հայտաբերեց, թե զնում է հայրենիք՝ Ախալցիս քաղաքը։

1915 թվին ստացվեցին ազենտուրային տեղեկություններ, վոր Լազովը յեկել է Թիֆլիս, և անցել է բայլշեկների Փրակցիայի տեղական կազմակերպության աչքի ընկնող գործիչների շարքը և ակտիվ մասնակցել է մայիսեկներան թուուցիկը բաց թողնելու գործին։

*.) Բայլշեկներա-թ. թ.

Նկատի ունենալով վերոհիշյալ տվյալները, վորոնք բավարար հիմք չեն տալիս այս գործի առթիվ ձեւական հարցապնդություն կատարելու, Քր. Դատ. 1035 հոդ. 1 հոդ. կարգով, բայց հաստատում են Պրոկոֆիյ Զափարիձեյի և Ռէանես Լազովի քաղաքական լիակատար անրարեհուսությունը, վորոնց առաջինը, չնայած վարչական կարգով նրա վրա դըրված մի շարք տուժերին, շարունակում է իր հանցավոր գործունեյությունը. իսկ բաց թողմած թուցիկը՝ մատնանշում է նրա հանցավոր ձգտումն ազգաբնակության մեջ սկիմանելու բացասական վերաբերմունք դեպի պատերազմը և դրանով նպաստելու թշնամու բանակի հաջողությանը, վորը համարու և դաշտաճանության, յևս կենքադրեյի:

Պրոկոֆիյ Ապրափիոնով Զափարիձեյին յենթարկել վարչական աքորի, վոստիկանության բաց հսկողության տակ, Արևելյան Սրբիրի նահանգներից մեկում հինգ տարի ժամկետով, իսկ Ռէանես Կարապետով Լազովին, արգելել բնակվելու Կովկասի սահմաններում յերեք տարվա ընթացքում:

Ներքին Գործերի պ. մինիստրի շրջաբերականի համաձայն (վոստիկանության գեղարտամենտին, 1881 թվի սեպտեմբերի 5-ի № 3580) վորոշեցի սույն դրագրությունն ուղարկել Թիֆլիսի պ. նահանդապետին, ի կարգադրություն:

ԳԵՂԱԳԵՏ ՊԱՍՏՐՅՈՒԼԻՆ

Արխիվային գործ՝ № 3152

Էնկ. Ալ. Զափարիձեյի ձերբակալումը և աքսորը մեծ կաղմալուծում առջ բերին ՌՄԴԲ (բայլէկիների) Թիֆլիսի կաղմակերպության աշխատանքի մեջ:

«Այս տարվա մայիսի 4-ին ՌՄԴԲ բայլէկիների Թիֆլիսի կաղմակերպության ղեկավար Պրոկոֆիյ Ապրափիոնով Զափարիձեյի ձերբակալումից հետո այդ կաղմակերպությունը քայլայվեց և մինչև հունիսի վերջը վոչնչով ցույց չտվեց իր գործունեյությունը»:

Այսպիսի գնահատական է տալիս Թիֆլիսի ժանդարմերիան ընկ. Ալ. Զափարիձեյի աքսորման փաստին:

1916 թվին ընկ. Զափարիձեն ուրիշ ազգանվան տակ (Բարատով) ժեկում և Տրապիզոն, վորն այն ժամանակ գրավված եր ցարական զորքերով: Այստեղ նա աշխատում է կարմիր Խաչում և միաժամանակ ղեկավարում է հեղափոխական կուսակցական աշխատանքը:

Փետրվարյան հեղափոխության ժամանակ ընկ. Ալյոշան Տրապիզոնում եր: Պատղամագոր ընտրվելով, նա շուտով գալիս է Թիֆլիս, վորտեղից բայլէկիների Բագրի կաղմակերպության պահանջով մեկնում է Բագր:

Բագրի ըլքանի նրա գործունեյության և Բագրի կոմունայի մեջ նրա մասնակցության մասին մենք կղատմենք ներքեւում: Իսկ այժմ Բագրի կոմունայի ղեկավարի—ընկ. Շահումյանի կենսադրական տեղեկություններին դիմելուց առաջ կրեքնք Ժանդարմական վարչության մի քանի վաստավթղթերի պատճենները, վորոնք վոչ միայն առանձին ընկերների, այլև ամբողջ կաղմակերպության գործունեյության պատկերն են տալիս:

Այդ փաստերը հետեւյալներն են՝


ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 7.

1915 թվի մայիսի 4. քաղ. Թիֆլիս, Ժանդարմական տռանձին կորպուսի սուսմբատը Ռուգալիոն Սուլայմանի. 1881 թ. սպասառի 14-ին Բարձրագույնից հաստաված պետական կառգը և հասարակական անդրությունը պահպանելու սիջոցների վերաբերյալ որենողության հիման վրա, հարցարքնեցի վերգես կառկածելի անձնավորության քաղաքական անբարեհուսության մեջ ներքոնշվալին, վայր հայտնեց:

1. Անուն, Հայրանուն, Ազգանուն ծննդյան վայրը և թիվը.
2. Դավանություն, ծագում ազգություն, հպատակություն:
3. Կոչում, մշտական բնակավայր, արձանագրման յենթարկվելու վայր, զբաղմունք, ապրուստի մէջցները:
4. Ընտանեկան գրաւթյուն (կնոջ կամ ամուսնու անուն, հայրանունը և ազգանունը, յերեխուների անունները, նրանց զբաղմունքը և բնակավայրը):
5. Ազգակցական կապեր (ծննդներ, ընդերք, քույրեր, նրանց բնակավայրը և զբաղմունքը):
6. Անեմ մայր—Աննա Գրիգորյենսա, ծն. Գրիգորիձե Թիֆլիսում: Քույրեր—Կերա-30 տար., ամուսնացած Մաշավարիանունետ, Շորապանի գավառի Արգիվթի գյուղում: Անմա-40 տար., ամուսնացած, Զիկվայիձեյի հետ Ռաշայի գավառի Ռնի գյուղում և Էլինա-35 տար., ամուսնացած Զափարիձեյի հետ, Ռաշայի գավառի Գորի գյուղում:

1299-93

Խարագավառ պատկերավուն



Յ. Մնողների կամ նուանց փոխարինող
ազգականների կամ խնտմակալնե-
րի մշտական բնակավայրը:

7. Մնողների տնտեսական դրությու-
նը:

8. Կրթության վայրը, (ցույց տալ
պահանջմանում, զորքան ժա-
մանակ և յեղել, ինչնույն յեղացել
յուրաքանչյուր ուսումնարանից,
յերբ և մտել, յերբ և դուրս յեղել):

9. Ուժմ հաշվին և կրթվել:

10. Ցեղել և արտառահմանում, յերբ,
մուր և լոնչ նպատակով:

11. Յեղթարկվել և տռաջ հարցաքըն-
նության, ուժմ կողմէց, վորանգ և
քնչպիս և վերջացել:

7. Մայրու դանդում և իմ խնամքի տակ:

8. Դուրս եմ յեղել Թիֆլիսի Ալեքսանդրյան
Ռուսական ինստիտուտի Յ-րդ դասու-
րանից մոտավորապես 1900 թվին սեփա-
կան ցանկությամբ:

9. Մնողներին հաշվին:

10. Զեմ յեղել:

11. Թիֆլիսի նահանգագործական ժամանք, վարչական
թյան առևնթերը 1900 թ. վարչական կար-
գով բանտ եմ նստել 5 ամիս և հետո
այսուհետ արձակվել առանց փորեկ հե-
տևանքների: 1909 թվին ձերբակալվել
եմ Բագդում և հինգ տարով արտաքսվել
կովկասյան յերկրի սահմաններից, այդ
աքսորը յես անց եմ կացրել արդեն:

Ենթառաջարկված հարցերին պատասխանում եմ. 1911 թ. յես ձերբակալեցի
թուսով Դիզ. քաղաքում և վոստիկանության բաց հակողության տակ յերեք տարով
արտօրվեցի Մեծ Ռուսուրայի քաղաքը. աքսորը ժամկետը լրացրի 1914 թվի մայիսին,
վորից հետո ուղևորվեցի Քութայիսի նահանգը ազգականներին ժուառ: 1914 թ. ոգոս-
թյում յեկա թիֆլիս և հաստատվեցի Մեծեվլայա փողոցի № 20 տանը, վորուել առ-
ջում եմ մինչև այսոր, զբաղվելով մանավոր դասերով:

Առավոտյան ժամը 8½-ից մինչեւ 11½-ը յես պարագում եմ սժիչկ ներկուայ գի-
ղենաշվիլու աղջկա հետ, վոր ապրում և իր մորաքույր Յեկատերինա կարտանակինա
ժամանուացակի Խողոնքայի ժուառ (Ուղինսկայա փ. սեփական ստամնաբաժական կա-
րենուա):

Ժ. 11½-ից մինչեւ 2-ը պարագում եմ Մարզամիայի վորդու Ալեքսանդրի հետ
(Միլոսլովսկայա փող. № 106):

Յերեկով ժամը 3-ից մինչեւ 4½-ը պարագում եմ Գյորգի Տակայչվիլու հետ (Մըբ-
նեցիայա փող. տան №-ը չի հայտն, նրա հայրը ճիշավաճառ ե (իրակի Նուլուկիձեյի
ժամանակածեյի փող. տան №-ը չի հայտն, նրա մայրը՝ նրա մայրը՝ Յեկատերինա Շուռ-
լուկիձեն ուսուցչուցի յել:

Ժամը 5-ից 7½-ը պարագում եմ Արչել Տուխարիլու հետ լեկանդովսկու դիմենա-
պիայի 4-րդ դասարանի սան (նրա մայրը՝ մանկարժանուհի Տուրուխելին անք ծննդառ-
քերության ապատարան, կարծեմ վորովովնի նրանցքում):

Այսպիսով իմ ամրոջ որը անցնում ե գասերով, հետո յերեկոները զբաղված եմ
մինուա աշխատանքով ժողովրդական համալսարանների ընկերության մեջ, վորի վարո-
չության անդամ եմ, և վրացի աղջանակության մեջ զբաղետություն տարանազ ըն-
դերսաթյան դրամարանային հանձնաժողովում:

ԳՐԱԿԱՖԻՅ ԶԱՓԱՐԻԶԵ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Թիֆլիսի նահանգային ժանդարմական Վարչության գործերից Քութայիսի նա-
հանգի մաշա դավանի Շարդումեթի ոյուղի ազնվական Պրոլետի Ապրասիոնի Զա-
փարիձեյի վերաբերյալ 35 ապրեկան:

Ստացված տեղեկանքներից պարզվեց, վոր Պրոկոֆիյ Ապրասիոնով
Զափարիձեյն հայտնի յել վորպես Թիֆլիսի սոց-դեմ. կազմակերպության
բայլշեկների ֆրակցիայի անդամ դեռևս 1900 թվից, յերբ նա Թիֆ-
լիսի նահանգային ժանդարմական Վարչության կողմից յենթարկվել
և զրադրության ախրանայի կարգով, պրոպագանդ մղելու մեջ կամկա-
ծելու համար, վորի պատճառով հուզումներ են առաջացել Անդրկովկաս-
յան յերկաթուղիների գլխավոր արհեստանոցների բանվորների մեջ. այս
գործի համար կովկասի քաղաքացիական մասի գլխավոր պետի կողմից
արգելված և յեղել նրան ապրել Անդրկովկասյան յերկրի սահմաններում:

1908 թվի մայիսի 18-ին Զափարիձեյն բոնվում և Բագու կայարանում
և խուզարկվում, վորի մէջոցին նրա մոտ գտնվել են 2 տպագրված թուու-
ցիկներ «Բոյկոտիստաների լիազորների բանաձեռք» և Բոլոր բանվոր-
ներին» և անեղաւ զրականություն, վորի համար նա այն ժամանակ Բագ-
վի նահանգային ժանդարմական Վարչության կողմից յենթարկվում և
պահպանության վերաբերյալ յեղած զրադրության, վորպիսի գրագրու-
թյունը զաղարեցված և առանց վորելից հետեանքների նրա համար:

Բազվի պահնորդական բաժնի պետի աղենտուրային տեղեկություն-
ների համաձայն, վորոնք վերաբերում են 1908—1909 թվերին, Զափա-
րիձեյն անդամ և ՌՍԴԲԿ Բագվի կոմիտեյի և կազմակերպության աջե-
լնկնու ակտիվի գործիչ, ինչպես և վնասակար ուղղություն ունենալու
պատճառով փակված թերթերի «Բակինսկի Պրոլետարիյ», «Բակինսկի
Ռաբոչիյ» և «Բակինսկի Վեստի»—աշխատակիցը և զեկավարը:

Անդրկովկասյան յերկաթուղիների ժանդարմական վոստիկանական
Վարչության Բաթումի բաժանմունքի պետի նույնական տեղեկություն-
ների համաձայն, վորոնք վերաբերում են 1909 թվի հուլիսին, Զափա-
րիձեյն անդամ եր Յերեկաթուղային Միության և տպագրական աշխա-
տանքն անցնում եր նրա ձեռքով: Կազ ուներ մարզային կոմիտեյի հետ:
Կողեկտիվն առանց նրան վոչ մի վորոշում չեր հանում և նա բանվորների
շրջանում վճռական դեր եր խաղում գործի համար:

1909 թվի հուլիսին Թիֆլիս կայարանում գնացքում հայտաբերվեց
մի չեմսպան, վորը բաց անելիս գտնվեց—անցագրի գրքույկ հիշյալ Զա-
փարիձեյի անունով և զանազան զրադրություններ, վորոնք վերաբերում
են նրա կուսակցական գործունեցությանը:

1909 թվի հոկտեմբերին Բագվի պահնի պահնորդական բաժնի կողմից Զա-

Փարիհեյի մոտ հեշտակ չեմսպանը գտնվելու գործով Ռամանի դյուցության Սոսկվա—Կովկասյան Ընկերության գործարանում կատարվեց խուզաբ-կություն, վորն ապարդյուն անցավ, բայց ինքը Զափարիան ձերա-կարվեց հենց այդ ժամանակ և յենթարկվեց ախրանայի գրադրության՝ Բագվի Ֆանդարբական Վարչության կեց, վորի (գրադրության) ավար-տումից հետո զիմում արվեց Բագվի քաղաքականին՝ աքսորելու նրան վոստիկանության բաց հակողության տակ Սիրիրի հեռավոր նահանգնե-րից մեկը, հինգ տարի ժամկետով:

1910 թ. վիետնամարին ուսյոնն ստացավ աղենտուրային տեղեկություններ, թե նույն վիետնամարի Յ-ին Թիֆլիսում տեղի ունեցած սոցիալ-դեմոկրատների ժողովում Զափարիձեն, բայլշևիկ, Բաղվիր սոց-ազգակազմակերպության անդամ ստացարկված է Ա.ՍԴԲԿ Մարզային կոմիտեյի անդամության թեկնածու:

Վերոհիշյալ գրագրության հետևանքով Նորին կայսերական Մհեծության Կովկասի Փոխարքումից կողմից արդելլեց Զափարիձեյի բնակությունը Կովկասյան յերկրու սահմաններում 5 տարվա ժամկետով։ Այս կարգադրության հայտարարումից հետո Զափարիձեն վորպես բնակավայր ընտրեց Ռուսություն Գյուղ քաղաքը, վորտեղ ուղարկվեց 1910 թվի Հունիսի 10-ին ետապի կարգով։

Այնուհետև նա անցավ Նախիջևանի, ոոց գլեմ՝ խմբակի գլուխը և յեռանդով զրազվեց նրա անջամների թվի լրացումով։ Նրա վրա գրվեց պրոպագանդիստական կենտրոնական դոկտրոցը վարելու պարտականությունը, վորի համար նա աշխատեց գտնել բնակարան և դրաղմունքին ժամանակից գարձրեց մի քանի հոգու։

Թողնելով զպրոցի միտքը, Գործադիր Կոմիտեն հանձնարարեց Զափարիձեյին՝ կազմակերպել պրոֆեսիոնալ գրությունների կենտրոնական բյուրո և սոց.-գեմ. բջիջներ պրոֆեսիոնալ բոլոր միություններին կից, ըստ վորում 1910 թ. նոյեմբերի վերջերին բացառապես իր սեփական ջանքերով, Զափարիձեն կազմակերպեց սոց.-գեմ. բջիջներ պրոֆեսիոնալ միություններին կից :

Նրա ղեկավարության տակ կազմակերպությունն ամրապնդվեց և նույն տարվա նոյեմբերին ընտրվեց «Գործադիր Կոմիտե ՌՍԴԲԿ Դռնի խմբի» :

Նույն տարվա դեկտեմբերին նա ներկայացրեց «Գործադիր Կոմիտե-
յի» քննությանն իր կազմած տեղական սոցիալ-դեմոկրատական կազմա-
կիրապության կազմակերպչական ծրագիրը։ 1911 թ. հունվարի 30-ին
նրա նախաձեռնությամբ կայացավ լրատվաճակորական ժողով, վորտեղ
ընտրվեց Դոնի Կոմիտե, վորի կազմի մեջ նու մտավ վորովուղարձ

Թոստովի քաղաքապետի կարգադրությամբ մի քանի պլոֆեսիոնալ ընկերությունների վակումից հետո Զափարիձեն մի բողոք կազմեց ադմինիստրացիայի կողմից ցուց տրված հալածանքի մասին, նպատակություններով վորքան հնարաւոր և մեծ թվով ստորագրություններ հավաքել բանալորենից և ուղարկել այդ բողոքը Պետական Դումայի նախագահին: Այդ բողոքի սկազգությունը դրված Զափարիձեյի ձեռքով, 1911 թ. մարտի 19-ն խուզաբեկության ժամանակ դանելց Դոնի Կոմիտեյի անդամ Կոնստանտին Բոգդանովի բնակարանում:

Նույն թվին Զափարինեն ձերբակալվեց Դոնի Կոմիտեի անդամների ժողովում, ախրանայի կարգով յենթարկվեց զբաղրության և վարչական կարգով առարկեց Վայոցդայի նահանգը Յ տարով:

1911 թվին Բագդիլ քաղաքային գումարի ընտրությունների ժամանակ, տեղական սոցխաշ-դեմոկրատները բաց թողին թուցիկ, վոր Կոչեր անում ձայն տալ սոց-դեմ. բլոկի թեկնածուներին, վորոնց թվում կառ Գուգանջիկ Ապուանինու Զախարիիձեն:

Բայտ Կուրանի Մարդացին Ժանդարմական Վարչության պետի ազեն-
տուրային տեղեկությունների, վարոնք վերաբերում էն 1911 թ. հռկանմ-
բեր ամսին, Պրոկոֆիյ Զափարիձեն Տուափեռեցում դեկալարել և սոցիալ-
գեմոլերատական խմբակը, վորտեղ նա ապրել և Գողուած անուն կրող
անդապրում :

Հստ ռայոնի աղենատուրային տեղեկությունների, վորոնք վերաբերում են 1912 թ. ողոստոս ամսին Թիֆլիսում, սոցիալ-դեմոկրատական բայլեկիների կազմակերպության մէջ կաղմաց մարտական խմբակ, վորը Բագվի բայլեկիների ղեկավարությամբ իր մէջոցներն ավելացնելու համար պատրաստում եր ինչ վոր կողոստում։ Այդ խմբակում գլխավոր մասնակցություն ուներ Բագվի սոցիալ-դեմոկրատ Պրոկոֆիյ Զափարիձեն, վորն արտաքայած եր Բագվից և այդ ժամանակ անեղաւ ապրում եր Կոմիսարում։

գեմոկրատ բայլշենիկը : Նա թիֆլիսում տեսնվեց սոց - դեմ . բայլշենիների լիքեր Սերգեյ Թավիշվիլու հետ , վորի ասելով նա հումիսի կեսերին հրավիրեց Բեկյան (բայլշենիկյան) խմբակի ժողով , վորտեղ Ալյոշա Զափարիձեն ինչ վոր գեկուցում արեց :

Իրոք այդ ժողովը կայացավ նույն ամսի 27-ին գումարկուլյորում Ալյոշա Զափարիձեյի մասնակցությամբ , վորը հաղորդեց , թե ինքը մտադիր է թիֆլիսում ստեղծել Բեկյան ամուր կազմակերպություն և միացնել այն նախ հայկական սոց - դեմ . խմբակի , իսկ հետո մենշենիկների հետ :

Նույն ամսի 31-ին յերեկոյան թիֆլիսի առևտրական ծառայողների նորարաց ակումբի ամարային շենքում Ալյոշա Զափարիձեյի մասնակցությամբ տեղի ունեցավ Բեկյան խմբակի ժողովը , վորտեղ վերջինս հայտնեց , թե Ալեքսանդրապոլից թիֆլիս և յեկել մի հին սոց . դեմ . իր ծանոթը , վորը խնդրել է Զափարիձեյի աջակցությունը Ալեքսանդրապոլում Բեկյան տեխնիկա կազմակերպելու համար , վորին Զափարիձեն պատասխանել է , թե տեխնիկան կազմակերպվելու յէ թիֆլիս քաղաքում ամբողջ Անդրեկովկան սպասարկելու համար :

Բեկյան խմբակը հավանություն տվեց Զափարիձեյի գործողություններին և միջոցներ ձեռք առավ իր տեխնիկան ստեղծելու համար դրամական սեսուրսներ գտնելու :

Բայտ մի այլ ագնոստուրային աղբյուրի տեղեկությունների , Ալեքսեյ Զափարիձե Բագվի սոց - դեմ . կազմակերպության հայտնի լիդեր , վոր կրում և «Պակիմ» կուսակցական մականունը , 1914 թ . ոգոստոսին անշեղալ ապրում եր թիֆլիսում : Նա այդ ժամանակ կապ ուներ Բագվի սոցիալ - դեմոկրատական կազմակերպության հետ և հաճախ այցելում եր Մասկովյան փող . № 17 տունը : Սեպտեմբերին թիֆլիսում կազմակերպել և Բեկյան խմբի միշտաք ժողովներ , վորի համար նույն սեպտեմբերի 6-ին նրա վրա սահմանվեց արտաքին հսկողություն «Զդույշ» կլիշեյով :

Նույն տարվա հոկտեմբերի 31-ին Բագվի նահանգային ժանդարմական Վարչության պետից ստացվեց մի հեռագիր , վորտեղ հայտնում եր , թե նոյեմբեր ամսի սկզբներին Պետերբուրգում և Լիֆլանդիայում դուժարվելու յէ ոռւս . սոց . դեմ . բայլշենիների կոնֆերանսը , վորին մասնակցելու համար թիֆլիսից և Բագվից պատգամավոր և ընտրված Պակիման (Զափարիձեն) : Նկատի ունենալով վերոզրյալը , նրա գործունեյության վրա հսկողությունը շարունակվեց , բայց նրա թիֆլիսից մեկնելու փաստը չհաստատվեց :

Նոյեմբեր ամսին Պետերբուրգում սոց - դեմ . պատգամավորների ձերբակալումից հետո այդ առթիվ հայտնեց իր ցավակցությունը :

1915 թվի գետրվար ամսին Բագվի սոց - դեմ . կաղմակերպությունից նրա մոտ յեկավ մի բայլշենիկ ինտելիգենտ :

Ապրիլի 9-ին դեկավարեց բայլշենիների ժողովը , վորտեղ քննվում եր մայիսի մեկը տոնելու և թուցին բաց թողնելու հարցը . այդտեղ նա ընտրվեց հանձնաժողովի անդամ , մայիսմեկյան թուցին ավելի հաջող բաց թողնելու գործը կազմակերպելու համար : Նույն ժողովում Զափարիձեն դեկավարեց թիֆլիսում «Բեկյային» լեզար որդան կաղմակերպելու մասին :

Նույն տարվա մայիսի 4-ին թիֆլիսում խուզարկվեց , ձերբակալվեց և յենթարկվեց զբագրության՝ ռազմական դրության մեջ հայտարարված վայրերի վերաբերյալ կանոնների 23-րդ հոդվածի կարգով :

Նույն տարվա մայիսի 4-ին թիֆլիսում խուզարկվեց , ձերբակալվեց և յենթարկվեց զբագրության ռազմական դրության մեջ հայտարարված վայրերի վերաբերյալ կանոնների 23-րդ հոդ . կարգով :

Նույն թվին նա ընտրված եր ժողովրդական համալսարանների թիֆլիսի ընկերության քարտուղար , վորի վարչությունը , ըստ յեղած ագենտուրային տեղեկությունների , բաղկացած եր բացառապես սոց - դեմ . գործիչներից :

Թիֆլիսի նահանգային ժանդարմական Վարչության պետի ոգնական թիֆլիսի , թելավի և Սղնախի գավառ ներում :

Ռուսմիսուր՝ ՌՈԶԱԼԻՈՆ ՍՈՅԱԼԱԿԻՑ

Արխիվ Գոնդ № 38
գործ № 3152

№ 376

12 մայիսի 1915 թիվ

Խոկտեմբերի հետ ճիշտ և
Քարտուղար՝

ՄՏ. № 1005. 1225.

№ 1234.

9 մայիսի 1915 թ.

Բոլորովին գաղտնի

Նորին կասերական Մեծության Կովկասի Փոխարքայի քաղաքական մասի ոգնականին (Հատուկ բաժին) № 52 :

Ըստ հետախոզության

1914 թ . ապրիլի վերջերին իմ ստացած աղենտուրային տեղեկություններից՝ Ռուսաստանի սոցիալ - դեմոկրատական բանվորական կուսակցության բայլշենիների թիֆլիսի կազմակերպության կազմի և գործունեյության մասին հաստատվեց , վոր կազմակերպության մեջ դեկավար գար դերը պատկանել եր վոմն կասյանի , պարզվեց , վոր նա հաշվապահ

23

Սարգիս Իվանով Տեր-Գասպարյանցն է, վոր խմբի կազմի մեջ մտնում է յին հաշվապահ Մինաս Իղնատյանը Մելիք-Արագյանց, Մեշտանին՝ Գրիգորիյ Դարչիկ Կուրուլով, գործակատար՝ Սիմեոն Ֆոմիչ Ելիավա, Քշանուհի՝ Կոնյա Ալեքսանդրովնա Ծուլուկինը և ուրիշները, և վոր այդ կազմակերպությունը վորոշել եր 1914 թ. մայիսի 1-ի որը բաց թողնել թուցիկներ, վորապիսիները պատրաստելու գործը հանձն առաջ վերոհիշյալ Մելիք-Արագյանցը:

Այդ թուցիկների բաց թողնելը կանխելու համար առբիլի 27-ի գիշերը յետ խուզարկեցի վերոհիշյալ անձնավորություններին, վորի ժամանակ Մելիք-Արագյանցը տեղն ու տեղը բոնվեց իր բնակարանում տպագրական շարվածքի վրա մայիսին կյան թուցիկներ տպագրելիս, վորի համար նա և նրա հետ կապված վերոհիշյալ անձինք ձերբակալվեցին: Այս ձերբակալությունն անչափ ազգեց կազմակերպության ազատ մնացած անդամների վրա, վորոնց ձերբակալությունը նպատակահարձար չհամարվեց ազենտուրան ձախողվելուց զերծ պահելու նպատակով, վոր կազմակերպության գործունեյությունը բոլորովին դադարեց և մինչեւ անցած տարվա հունիսի վերջը վոչնչով չարտահայտվեց:

1914 թ. հունիսին Թիֆլիս յեկավ, վո՞րտեղից՝ վորոշված չե, Քութայիսի նահանդի Ռաշա գավառի Շարդումեթի գյուղի ազնվական «Ալյոշա» և «Այլոշա Բալախանկիյ» մականուն կրողը, վորն իր վրա վերցրեց բայլշեկիյան կազմակերպության հետագա ղեկավարությունը և 1914 հունիսի 25-ին Ս. Դավիթի սարի վրա կայացած ժողովին հրավիրեց կազմակերպության ազատ մնացած անդամներին—գյուղացի Մերգեյ Թագիբչյիլուն, Մասկվայի համալսարանի ուսանող Հարություն Ակիմով Սոլովյանին և կոչկակար՝ «Ասատուրին»:

Այդ ժողովում Ալյոշա Զափարինն հայտարարեց, թե մտադիր ե Թիֆլիսում ստեղծել բայլշեկիյան ամուր կազմակերպություն և աշխատել միացնել այն մենշեկիների հետ՝ «լիկվիդատորականության» վերջ տալու համար, և ստեղծել միայն միանական ընդհատակյա սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն Թիֆլիսում: Բնդ վորում Զափարինն ավելացրեց, վոր ունենալով այդ մտադրությունը, նա դնացել է Քութայիս, վորտեղ նրան իրը թե խստացել են աշակեցություն:

1914 թվի հուլիսի 31-ին առևտրական ծառայողների ակումբի ամառային շենքում նույն Զափարինը ղեկավարությամբ կայացավ 2-րդ ժողովը, վորին ներկա Ելին ընդամենը 4 մարդ:

Ժողովում Զափարինն խոսեց՝ մի սոցիալ-դեմոկրատի միջոցով Ալեքսանդրապոլ քաղաքում տեխնիկա կազմակերպելու մասին և խնդրեց ներկա յեղողներին միջոցներ ձեռք առնել դրամ հավաքելու այդ նպատա-

կի համար, վորը և նրանք խոստացան: Սակայն այս վորոշումը վոչ մի իրական ձև չստացավ:

Հետագա ժամանակամիջոցում մինչև 1915 թ. հունվարը Բայլշեկիկյան կազմակերպությունը վոչ մի գործունելություն ցույց չտվեց: Այս ապրված հունվարին մի բնակարանում, վորի տերը չպարզվեց, Զափարինը յի ղեկավարությամբ կայացել է կազմակերպության ժողովը, ներկան յեն յեղել 8 նոր հայ անդամներ և 2 հայ որիորդ, նոր անդամներից հաջողվեց պարզել միայն Սարդիս Մելիքսեթյուլ Խանանյանցը (Խանոյան): Ժողովում Խանանյանցը կարդաց «Աշոտ»-ի բերած և Գետրողրագից ստացված կենտրոնական Կոմիտեյի նամակի—կոչը, վոր գատարարատում եր այն բոլորին, վորոնք այս կամ այն մատնակցությունն են ունեցել պատերազմին, այս կոչի վերաբերմաբ վորոշվեց տարածել այն: Այս վորոշումը չի բարերձուվեց:

Ապրիլի 9-ին կայացավ կազմակերպության նոր ժողովը, վորին ներկա Ելին՝ Ալեքսեյ Զափարինն, գյուղացի Վլադիմիր Պավլով Սուխիշվիլի, վերահիշյալ «Աշոտ»-ը և վոմն Վասիլիյ, վոր Ոհաննես Կարապետով Լազովն եր, կոչկակար Ասատուրը, յերկու հայուհիներ, վորոնք ներկա Ելին հունվարի 11-ի ժողովին, ընդամենը 15 մարդ, վորոնց ով ինեւն տուայժմ ստուգված չե:

Ալեքսեյ Զափարինը նախաձեռնությամբ հարց գրվեց մայիսի մեջին մի բայ բայ թողնելու մասին, ըստ վորում, վորոշվեց: Հնայած անհպատ պարմաներին, ձեռք առնել բոլոր միջոցները հիշյալ կոչը բաց թողնելու համար, կոչ կազմելը հանձն առաջ Զափարինն, իսկ կրչը տպագրելու և տարածելու տեխնիկական կողմի պատրաստությունը հանձնարարվեց Մերգեյ Թալլիի վելուտին և մի հայի, վորը ժողովին բերել եր Պետական Դումայի սոցիալ-դեմոկրատական Փրակցիայի գեկլարացիայի պատճենը: Կոչը հաջող կերպով բաց թողնելու համար ընտրվեց մի հանձնաժողով, վորի մեջ մտան Զափարինն, Սերգեյ Թագիբչյիլի, մի հայուհի, հայ «Վասարին» և վերօհիշյալ հայր, վորը ժողովին բերել եր ուկարացիայի պատճենը:

Քանի վոր այդ ժողովի ձերբակալությունն ինչպես և կազմակերպության անդամների լիկվիդացիան մայիսի մեկից առաջ կարող Ելին անդրադանալ աղենտությամբ դրաւթյան վրա, ուստի ին անհրաժեշտ Համարեցի նկատի ունենալով, վոր հնարավոր ե յերեան բերել կոչերի տպագրության տեղը, արտաքին և աղենտության հետապնդության մի ջոցով, հսկողություն սահմանել Զափարինը և Վասիլիյի վրա և նրանց առնչությամբ պարզել նաև այն անձանոթ հայի ով լինելը, վորի վրա Թալլիի վելու հայուհին միացման դրված եր կոչը տպատրերու պարտականությունը: Նույն այս նպատակով հսկողության տակ առնելոց նաև

Թավդիշվիլու բնակարանը։ Սակայն, չնայած այս միջոցներին, չհաջող-
վեց պարզել հայի ովլ լինելը, իսկ կոչի տպագրության տեղը պարզելու
և այդ դորձը վարող կազմակերպության անդամներին գտնելու համար
ուղարկված աղենատուրայի միջոցով միայն պարփի 30-ին պարզվեց, վոր
թոռուցիկներն արդեն տպված են միայն ոռւսերեն լեզվով և այդ որը պետք
է տարածվեն կազմակերպության անդամների մեջ, և, վոր թոռուցիկները
տարածելու յե հայ Կոչկարար «Ասատուր»-ը, վոր մասնակցել ե Կոստե-
ճագենի կուսակցական համագումարին։

Հետագա հետազոտությամբ հաջողվեց պարզել, վոր Ասատուրն
ինը չի տարածել թոռուցիկները, այլ մի անձանոթ հայ յերիտասարդի
միջոցով։

Այդ հայի ովլ լինելն առայժմս ստուգված չե, իսկ «Ասատուր»-ը
պարզվեց, վոր Կոչկարար Մկրտիչ Ստեպանով կախոյացն է։

Նկատի ունենալով աղենատուրայի նրանց մոտիկ լինելը, վորի ոգնու-
թյամբ հաջողվեց վորոշել նրանց ովլ լինելը, ներկայումս նրանց խուզար-
կելն ու ձերբակալելն առայժմ հնարավոր չի դառնում։ Ռւստի այժմ ջանք
և թափում պարփելու կոչերի տպագրության տեղը և տեղն ու տեղը
բռնելու նրանց կաչ տպագրելու նոր փորձ անելու դեպքում, յեթե նման
ժտադրություն լինի, և այնպիսի պայմաններում, վորոնք ապահովեն
աղենատուրան ձախողությունից։

Աղենատուրայի միջոցով հաջողվեց վերցնել 300 որինակ կոչ («Ռու-
սաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության թիֆ-
ֆախի կազմակերպության» անունից հրատարակված թոռուցիկներ), վո-
րոնցից 3 որինակ ներկայացնում եմ սրան կից։

Քանի վոր կոչեր տարածելը վորոշված և միայն մայիսի մեկի որը,
ապա յես մայիսի մեկի նախորդ դիշերը խուզարկեցի կազմակերպության
անդամներ խանոյանին և կազմվի։ Բացի դրանից՝ կանխորոշված եր խու-
զարկել և անդայման ձերբակալել կազմակերպության դեկավար Ալեքսայ
Զափարիձեյին, կուսակցական կեղծ անունը «Պակիա», բայց նրան հա-
